

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Տ. ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ԱՅՅԸ ՊՈՍԹՈՆ

1968 Փետրուար 8-ին, Հինգշաբթի, առաւօտեան ժամը 4:20-ին, Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան, Պատրիարք Հայոց Երուսաղէմի, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտատեանի, Եւրոպայի անգլիական ընկերութեան օդանաւով ճամբայ ելաւ Թէլ-Աւիւէն դէպի Լոնտոն: Օդակայանին մէջ ընդունուեցաւ Անգլիոյ Կաթողիկոսական Պատուիրակ Գերշ. Տ. Պսակ Արքեպս. Թումայեանի կողմէ, որուն հետ երեք ժամերու տեսակցութիւն մը ունենալէ վերջ, ամերիկեան օդանաւով շարունակեց ճամբան դէպի Պոսթոն, որ Ամերիկայի իր շրջապատոյտին առաջին հանգրուանը պիտի ըլլար:

Պոսթոնի Թաունթընի Քաղաքապետը և Նահանգի Կառավարիչը ներկայացուցիչ Գնդապետ Ճերոմ Օ'Գոննըր ընդունեցին Պատրիարք Սրբազանը օդակայանէն և առաջնորդեցին զինք պատուոյ սրահը, ուր, զինք շրջապատող թերթերու և հեռատեսիլի ներկայացուցիչներուն՝ Նորին Ամենապատուութիւնը յայտնեց.

«Կու գամ Երուսաղէմէն, Սուրբ Տեղեաց մեր իրաւունքներուն վերաբերեալ հարցերով, ինչպէս նաեւ Սիոն լեռան վրայ պատերազմին անհետնալով մեր սրբավայրերու վերաշինութեան համար նիւթական միջոցներ հայթայթելու միտումով:

Մեծ հաճոյք է ինծի համար գտնուիլ հոս, մեծ այս երկրին մէջ, խառնախառն ազատութեան և խաղաղութեան, հայրենիքը անկախութեան, որուն սեւեռուած են ամբողջ ազատատենչ ժողովուրդներու նայուածքները:

Ի սրտէ կը մաղթեմ որ Տիրոջ օրհնութիւնը միշտ անպակաս ըլլայ այս մեծ երկրի և ժողովուրդի վրայէն, որպէսզի ան ի վիճակի ըլլայ յանձանձելու իրմէ ակնկալուած ազատութեան և խաղաղութեան բարիքները, որոնց այնքան պէտք ունի տառապող մարդկութիւնը»:

Հիւրասրահին մէջ Պատրիարք Սրբազանը դիմաւորուեցաւ Ամերիկահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Մանուկեանէն, Պատրիարքարանի Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանէն՝ որ Սրբազան Պատրիարքի ժամանումէն առաջ Ամերիկա մեկնած էր արդէն, Հոգշ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Ինդոյեանէն, Արժ. Տ. Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեանէն, Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգաբարձութեան և այլ պաշտօնական անձնաւորութիւններու կողմէ:

Այս առթիւ, Նահանգապետի ներկայացուցիչ Գնդապետ Ճերոմ Օ'Գոննըր Նորին Ամենապատուութեան ներկայացուց պատուոյ մագաղաթ մը, հետեւեալ պարունակութեամբ.

«Մասաչիւսէթսի նահանգը, իր Կառավարիչին՝ Նորին Վսեմութիւն Ճան Վոլքէի ձեռնով, Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Բ.-ին, Պատրիարքին Հայոց Երուսաղէմի, իր այցելութեան առթիւ ի Մասաչիւսէթս, կը ներկայացնէ երախտիքը բոլոր քաղաքացիներուն, որուն այնքան արժանի է եկող մեծ հիւրը»:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 111):

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍ Զ. ՊԱՊԻՆ

Ընդառաջելով Ս. Պապի քանիցս կրկնուած հրաւերներուն, Ս. Պատրիարքը, Երկուշաբթի առաւօտ երկար տեսակցութիւն մը ունեցաւ Նորին Սրբութիւն Պօղոս Զ. Պապին հետ, Վատիկանի Պալատին մէջ: Ներկայ էին Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան և

Հայր Հերոնիմոս Համեր: Քառասունհինգ վայրկեաններու խօսակցութենէն ետք, որուն գլխաւոր նիւթն էր Երուսաղէմի և Քրիստոնէական Սրբատեղիներու գոյավիճակը, Ս. Պատրիարքը ներկայացուց Սրբազան Քահանայապետին Ս. Յարութեան աղամանդակու շքանշանը: Ս. Պապը ներս հրաւիրեց նաեւ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վարդապետը և Հայր Ճան Լոնկ, ինչպէս նաեւ լուսանկարիչ Յարութին Չոլաքեանը: Ս. Պապը նուիրեց Ս. Պատրիարքին Ս. Պօղոս և Ս. Պետրոսի արձանները և Վատիկանի Երկրորդ Ժողովի ատենագրութիւններու առաջին գեղատիպ հրատարակութիւն մը, իսկ Գերշ. Տ. Շահէ Եպս.-ին նուիրեց նոյն հրատարակութիւնը և մետաղեայ խաչ մը, Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ.-ին և Պրն. Չոլաքեանին Նորին Սրբութեան դիմանկարով դրոշմուած դրամներ:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 120):

ԲԱՅՈՒՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ

Ընդառաջելով Ծերակոյտի քարտուղարի հրաւերին, Ամենապատիւ Սրբազանը ընդունած էր իրեն ընծայուած բացառիկ պատիւը՝ բանալու Ամերիկեան Ծերակոյտի նստաշրջանը, յատուկ աղօթքով:

Փետրուար 14-ի Չորեքշաբթի օր, ժամը 11:30-ին, Եղիշէ պատրիարքը, իր շքախումբով առաջնորդուեցաւ Գաբիթոլի պալատը, ուր Ծերակուտականներու ժողովասրահի մուտքին ընդունուեցաւ Ծերակուտական էտուրատ Պրուքի և Աւագերէց Հարրիսի կողմէ: Ժամը 12-ին Պատրիարք Սրբազանը մուտք գործեց ժողովի դահլիճը, ուր բարձրացաւ նախագահական ամպիոնը և ժողովը բացաւ հետեւեալ աղօթքով.

«Եկած Երուսաղէմէն՝ Ս. Քաղաքէն, կ'աղօթեմ վսեմաշուք այս ժողովին հետ՝ զինադադարի և խաղաղութեան համար, յանուն խաղաղութեան Իշխանին և կը յայտարարեմ ձեզի որ դուք, իւրաքանչիւրդ, ձեր հոգիին մէջ, կեանքն Է Երուսաղէմի, Բեթղեմի և Նազարէթի:

Միացած ենք հոգեպէս ձեզի բոլորիդ հետ և կը սիրենք ձեզ անհուն սիրով. ձեզմէ իւրաքանչիւրը, ճառագայթ մըն է վառող՝ այն ջահին որ խորհրդանիշն է յափտեմական կեանքին՝ լուսավառուող Ս. Յարութեան Գերեզմանէն ներս:

Ձեզի կը նայինք իբրեւ բազկերակը Երուսաղէմի և սրտի բաբախումը Բեթղեմի, փառքը Քրիստոնէական Սրբավայրերուն:

Ս. Հոգիով զօրացած, Աստուծոյ օրհնութիւնը կը հայցենք ձեր վրայ, ձեր օրհնեալ երկրին, այս համաբաշխութեան Կառավարութեան, Միացեալ Նահանգներու Նախագահին և բոլոր անոնց վրայ՝ որոնք արդար և ուղիղ իշխանութեամբ կը կառավարեն. կ'աղօթեմ որ շարունակէք ըլլալ մեր յոյսին նեցուկը, մեր բաշխութեան ամրոցը և մեր վճռականութեան խարխիւր:

Ով Տէր, աղբիւր մեր հաւատքին, բու անունովդ կ'օրհնեմ Սուրբ Յարութեան այս նշանը, խորհրդանիշ յարութեան և վերածնունդի, որպէսզի Նախագահը որ պիտի ստանայ զայն մեր ձեռքէն՝ շարունակէ առաջնորդել այս ժողովուրդը դէպի կեանք, ազատութիւն և երջանկութիւն»:

Ամպիոնէն իջնելէն վերջ, Պատրիարք Սրբազան Հօր շուրջ հաւաքուեցան Ծերակուտական Մանսֆիլտ, Պապ Քենետի, Պրուք և ուրիշներ, յայտնելու համար իրենց ուրախութիւնը, որ, առաջին անգամ ըլլալով ոչ-ամերիկացի մը կը կատարէ Ծերակոյտի բացումը:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 116):

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՀ ՔԵՆԵՏԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Փետրուար 15-ի ժամը 3:30-ին, կ. ե., Ս. Պատրիարքը ծաղկեփունջ մը զետեղեց Նախագահ Քենետի յուշարձանին վրայ, Արլինկթրնի գերեզմանոցին մէջ, ապա աղօթեց Անժանօթ Զինուորի Յուշարձանին առջեւ: Իրեն կ'ընկերանար Արլինկթրնի շրջանի զինուորական ընդհանուր հրամանատարը:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 116):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՆ

1967 Դեկտեմբերին լրացաւ մեծանուն Հայ հոգեւորական և գիտնական Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի ծննդեան հարիւրամեակը:

Այս առթիւ, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը որոշած է հրատարակել բազմավաստակ գիտնականին ամբողջական երկերը, որոնց մէջ պիտի ամփոփուին իր պատմական, մատենագրական, բանասիրական, ինչպէս նաեւ գեղարուեստի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւնները, քանի մը հատորով:

Առաջին հատորը պիտի բովանդակէ պատմական ուսումնասիրութիւնները, և լոյս պիտի տեսնէ Անթիլիասի տպարանէն:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 195):

ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՓՈՂՈՅԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Հինգշաբթի, 21 Մարտին, կէսօրէ ետք ժամը 4-ին, Մայրավանքի դիմացի հրապարակին վրայ, Երուսաղէմի Քաղաքապետ Թէտի Քոլլէք իր կողքին ունենալով Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, պաշտօնական բացումը կատարեց «Հայոց Պատրիարքարանի փողոց»-ին: Բացումէն առաջ, Ն. Վսեմութիւնը խօսք առնելով ճակատագրի հանգիստութեան մը նշմարեց ընդմէջ Հայ և Հրեայ ժողովուրդներու կեանքին ու պատմութեան: Ապա Սրբազան Պատրիարք Հայրը շնորհակալութեան խօսքեր ըրաւ: Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութիւնը մէջ ընդ մէջ երգեց երեք ազգային երգեր: Ներկայ էին Միաբանութիւնն ու ստուարաթիւ ժողովուրդ: Ապա Պատրիարքն ու Քաղաքապետը բարձրացան Պատրիարքարան, ուր Ն. Վսեմութիւնն ու իր հետեւորդները պատուասիրուեցան:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 199):

«ՎԱՐԴԱՆԱՆՔ»

Ուրբաթ, 8 Մարտ, 1968, երեկոյեան ժամը 8-ին, Վարդանանց տօնին առթիւ Հ. Ե. Միութեան սրահին մէջ Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի և Հնժայարանի ուսանողութեան կողմէ յաջողութեամբ բեմադրուեցաւ Եղիվարդի «Վարդանանք» վեցարար թատերգութիւնը՝ նախագահութեամբ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Ս. Հօր և խուռն բազմութեան մը ներկայութեան: Հանդիսականներ մեծ խանդավառութեամբ ծափահարեցին Ժառանգաւոր սաներու յաջող խաղարկութիւնը և սրահէն մեկնեցան գոհացած սիրտերով:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Մարտ-Ապրիլ, Թիւ 3-4, Էջ 199):